ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

*Archbishop Torkom Manoogian, Primate*

*Թիւ 30510*
*Օգոստոս 16, 1988*

*Մեծայարգ*
*Տիար Արա Տոսթուրեան*
*Աթլանթա.*

*Յարգելի Տիար Տոսթուրեան,*

*Աթլանթայի Եկեղեցական Խորհուրդը, ձեր ատենապետութեամբ, անցնող քանի մը տարիներու ընթացքին օգտակար աշխատանք տարաւ տեղւոյն հայերուն հոգեւոր եւ մշակութային կարիքները հոգալու կապակցութեամբ։*

*Մեր շնորհակալութիւնը կը յայտնենք ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն՝ ձեր ցուցաբերած հետաքրքրութեան եւ ձեզի վստահուած պաշտօնի գիտակցութեան համար։*

*Բարի եղէք մեր գնահատանքը փոխանցել ձեր գործակիցներուն։*

*Եկեղեցական Խորհուրդի նոր կազմը, ատենապետութեամբ Տիար Սիմոն Տեփոյեանի, վստահ ենք որ ձեր օժանդակութիւնը պիտի վայելեն՝ երբ որեւէ հարցի կապակցութեամբ դիմում կատարեն ձեզի։*

*Կ՚աղօթենք որ Տէրը Իր հովանին անպակաս ընէ ձեր բոլորին վրայէն եւ ձեզի յաջողութիւն պարգեւէ։*

*Սիրոյ ողջունիւ*

*ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ*
*Առաջնորդ*

*Օրինակ՝ Տ. Վրթանէս Ա. Քհնյ. Գալայճեանի*